

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

ք. Երևան

2009 թ.

«-----» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Պատվիրատու»), ի դեմս գլխավոր Գլխավոր Տնօրեն՝ -----, որը գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Մեդիա Մաքս» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Կատարող») ի դեմս տնօրեն Ա.Թադևոսյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

- 1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողն իրականացնում է ՀՀ հեռուստաընկերությունների, թերթերի, գործակալությունների և ցանցային լրատվամիջոցներում կապի օպերատորների մասին հրապարակումների մոնիտորինգ, դրա հիման վրա պատրաստում է ամենօրյա ինֆորմացիոն տեղեկատուներ ռուսերեն և անգլերեն լեզուներով և տրամադրում դրանք Պատվիրատուին էլեկտրոնային փոստի միջոցով:
- 1.2. Մոնիտորինգի առարկա հանդիսացող ՀՀ հեռուստաընկերությունների, թերթերի, գործակալությունների և ցանցային լրատվամիջոցների ցանկը ներկայացված է Հավելված 1-ում, որը հանդիսանում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը: Ցանկը կարող է փոփոխվել՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:
- 1.3. ՀՀ հեռուստաընկերությունների, թերթերի, գործակալությունների և ցանցային լրատվամիջոցներում կապի օպերատորների մասին հրապարակումների մոնիտորինգի հիման վրա Կատարողը կազմում է շաբաթական, ամսական և եռամսյակային վերլուծական հաշվետվություններ՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով և տրամադրում դրանք Պատվիրատուին էլեկտրոնային փոստի միջոցով:
- 1.4. Կապի օպերատորների վերաբերյալ հրապարակումների դրական, բացասական, կամ չեզոք հիշատակումների նկարագրությունը տրված է Հավելված 2-ում, որը հանդիսանում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը:
- 1.5. Շաբաթական, ամսական և եռամսյակային հաշվետվությունների կազմելու կարգը տրված է Հավելված 3-ում, որը հանդիսանում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը:
- 1.6. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը յուրաքանչյուր երկուշաբթի Պատվիրատուին է տրամադրում մոնիտորինգի առարկա դարձած հեռուստատեսային նյութերի տեսաձայնային տարբերակը՝ DVD սկավառակի տեսքով: Առանձին դեպքերում Պատվիրատուն կարող է հանձնարարել իրեն վերաբերող նյութերի տեսաձայնային տարբերակը DVD սկավառակի տեսքով տրամադրել դրանց եթեր հեռարձակման հաջորդ օրը:
- 1.7. Կատարողը հստակ նշում է մոնիտորինգի առարկա դարձած հրապարակումների աղբյուրը և ամսաթիվը և պատասխանատվություն չի կրում դրանց բովանդակության համար:
- 1.8. Պատվիրատուն Կատարողից ստացված տեղեկությունը օգտագործում է սեփական կարիքների համար և իրավունք չունի այն վերավաճառել /փոխանակել/ ուրիշ ձեռնարկությունների, կազմակերպությունների, այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց, տեղադրել Ինտերնետում:

### 2. Կողմերի պարտավորությունները

Պայմանագրի գործունեության ժամկետի ընթացքում Կողմերը պարտավորվում են.

- 2.1. Պատվիրատուն Կատարողից ստացված նյութերը օգտագործելիս պարտավորվում է վկայակոչել Կատարողին որպես ստացված տեղեկատվության աղբյուր:
- 2.2. Կատարողը պարտավորվում է ժամանակին և պատշաճ կերպով տրամադրել նյութերը:

2.4. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի պահանջով մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները:

### 3. Վճարման պայմանները

3.1. Պայմանագրի ամսական գինը կազմում է ----- (-----) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

3.2 Վճարումն իրականացվում է յուրաքանչյուր ամսվա համար, մինչև հաջորդ ամսվա տասը Կատարողի Պայմանագրում նշված բանկային համարին դրամական միջոցները փոխանցելու միջոցով՝ ներկայացված հաշիվ-ապրանքագրի հիման վրա:

3.4. Սույն պայմանագրով վճարումները համարվում են կատարված Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցման պահից:

3.5. Պայմանավորված ժամկետում Պատվիրատուի կողմից վճարումը չկատարելու դեպքում, Կատարողը ազատվում է 1.1. կետով նախատեսված պարտավորությունից և իրավունք ունի կասեցնել ծառայությունների մատուցումը:

### 4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման դեպքում, խախտող կողմը պահանջի դեպքում մյուս կողմին վճարում է տույժ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ վճարվելիք գումարի 0.1 (մեկ) տոկոսի չափով,

4.2. Սույն պայմանագրի կետերը խախտելու դեպքում խախտող կողմը փոխհատուցում է մյուս կողմին հասցված իրական վնասը:

4.3. Կատարողը պատասխանատու չէ բաների տեղադրման ուշացման համար, եթե այն պայմանավորված է հետևյալ գործոններով.

ա/ գործադուլներ, լոկաուտներ, փոթորիկներ, հրդեհներ, գողություններ, որոնք գտնվում են տվյալ երկրի կառավարության հսկողության տակ, քաղաքացիական պատերազմի, պատերազմի ակտերով, բ/ համակարգչային ցանցերի և կապուղիների անջատումներ, խափանումներ, համակարգչային վիրուսների ներգործություն,

գ/ Կատարողի հսկողությունից դուրս գտնվող այլ ֆորս-մաժորային պատճառներով:

4.4. Տույժի վճարումը չի ազատում Կողմերին կատարելու սույն պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները:

### 5. Վեճերի լուծման կարգը

5.1. Սույն Պայմանագրից բխող հնարավոր տարաձայնությունները և վեճերը Պատվիրատուն և Կատարողը լուծում են բանակցությունների միջոցով: Այն դեպքում, երբ կողմերը փոխադարձ համաձայնության չեն գալիս, տարաձայնությունները և վեճերը լուծվում են դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

### 6. Այլ պայմաններ

6.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում 2009 թ. ----- և գործում է մինչև 2009 թվականի -----:

6.2. Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է լուծել Պայմանագիրը՝ այդ մասին մյուս կողմին նախօրոք՝ 10 օր առաջ, գրավոր տեղեկացնելով: Պատվիրատուի նախաձեռնությամբ սույն Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում վերջինս Կատարողին վճարում է սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված ծառայությունների չափին:

6.3. Սույն պայմանագրի ցանկացած փոփոխություն և լրացում ուժի մեջ են, եթե դրանք ձևակերպված են գրավոր և ստորագրված են երկուստեք:

6.4. Կողմերից ոչ մեկը չի կարող հատկացնել կամ փոխանցել որևէ երրորդ կողմի սույն Պայմանագրից բխող իրավունքները, պարտականությունները կամ պարտավորվածությունները՝ առանց մյուս կողմի գրավոր համաձայնության:

6.5. Սույն պայմանագրի իմաստով մեկ ամիսը հավասար է 30 (երեսուն) օրվա:

6.6. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին՝ մեկական օրինակ:

## 8. Կողմերի հասցեները և հաշվարկային հաշիվները.

Կատարողը. «ՄԵԴԻԱ ՄԱԶՄ» ՓԲԸ

ք. Երևան, Բաղրամյան 1, բն 32

հեռ. 54-54-31, ֆաքս. 54-54-37

e-mail: [news@mediamax.am](mailto:news@mediamax.am)

Հ/հ N: 115004672446

«Հայբիզնեսանկ» ՓԲԸ

հվհհ 00051263

Տնօրեն

Ա. Թադևոսյան